ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ծաղկաբեր համայնքի ավագանու արտահերթ նիստի և համայնքային նշանակության միջոցառումների (ՏԻՄ-երի ասուլիսների, հանրային քննարկումների) վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Ծաղկաբեր	Ավագանու արտահերթ նիստ	21.05.2020թ.	10:00	**Ծաղկաբերի** համայնքապետարան (գ.Ծաղկաբեր,2 փողոց, 12 շենք)

Նախագիծ

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020թ.
ՄԱՅԻՍԻ 21-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Ծաղկաբեր համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 21-ի արտահերթ նիստի օրակարգը

Օրակարգ

1. Ծաղկաբեր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 18-ի «Ծաղկաբեր համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 34-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

Զեկ. Հ. Հովհաննիսյան

2. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին

Զեկ. Հ. Հովհաննիսյան

3. Համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին

Զեկ. Հ. Հովհաննիսյան

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի «ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 34-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով և 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 3-րդ կետով՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

1. Ծաղկաբեր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 18-ի «Ծաղկաբեր համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 34-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից 6 հատվածների:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ծաղկաբեր համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Ծաղկաբեր համայնքի ավագանու
2020 թվականի մայիսի 21-ի թիվ 15-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Բաղդասարյան Հասմիկ Էդվարդի---------50000 /հիսուն հազար դրամ/ ուս. վարձ/

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԸ

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ղեկավարվելով տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 28.10.2010 թվականի թիվ 1477-ն որոշմամբ հաստատված կարգով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Ծաղկաբեր համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերը ՀՀ կառավարության 28.10.2010 թվականի թիվ 1477-Ն որոշմամբ սահմանված կարգով մինչև մեկ տարի ժամկետով առանց մրցույթի համայնքի ղեկավարի կողմից համայնքի արոտօգտագործողներին տրամադրելուն:

2. Արոտավայրերից օգտվելու տարեկան վարձավճարի չափը սահմանել տվյալ հողամասի հողի հարկի տարեկան դրույքաչափին հավասար: